



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԴՊՐՈՑԱՍԵՐ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ,
ՆՐԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԻՆ

ԳԵՐՐԳ ՆԱԽԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄՔ ՏԵԱԼԻ ԵՒ ԿԱՄՈՔԻ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻՆՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ,
ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵՆԱՐ ԱՐՈՈՒՅ ԱՐԱԳԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՑ ՄՐՐՈՅ ԿԱԹՈՂԻԴԻԿ Էջմիածնի

ԴՊՐՈՑԱՍԵՐ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՊԱՏՎԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ եկ Նոյս ՎԱՐԺԱՐԱՆ
75-ԱՄՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԱՐԺԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ եկ ՄԵՐ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՎԱԿԱՆ ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՅԱՍ-
ՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԶՄԱԶԱՐՁԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ-
ԳՈՎԻՑ եկ ՆՈՐՍ. ԳՈՎՈԿՈԼԻՑ՝ ՀԱՅՐԱԿԱՆ ՄԻՐՈ ՈՂՅՈՒՅՆ եկ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԻ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Կիբը, բնդիանցապես, և հայ կիբը, մասնավորապես, հայտելի է իր կրո-
նափորւթյամբ: Քրիստոնեական կրոնի արշալույսին յուղաբեր կանայք էին,
որ հավատով զորացած աներկյուղ եկան, իրենց սիրած ու պաշտած Վարդա-
պետին պատահեցին, նորա մարմինը բանկարժել ու անուշանոտ յուղերով
օձեցին ու դրին գերեզման: Եկ այս՝ այն ժամանակ, երբ Պետրոս առաքյալը
Շահնայապետի աղախնի առաջ մեղկացավ, բռվացավ և ուրացավ իր Վար-
դապետին՝ Հիսուսին, այն ժամանակ, երբ Թովմաս առաքյալը, բերանավա-
տուրյամբ բռնված, իր Վարդապետի կողերը շոշափել ցանկացավ, որ հա-
վատաւ:

Հայ կիբն էր, որ հիեղեցրող դարում, Վարդանանց պատերազմի օրե-
րին՝ կրոնի, Ազգի և Հայրենիքի աղատության և անկախության համար մղվող
պատերազմում, ամեն տառապանք կրելով, կանգնեց իր ամուսնու կաղին ի
խախույս՝ և անձնվիրաբար օգնեց պատերազմող մարտիկերդին՝ մարտիրո-
սացավ ու անմանացավ:

Հայ կինը՝ հայի տառապալից տեսկան պատմության ընթացքում, ամեն շարքաշ կյանք տանելով՝ իր ամուսնու անբաժան ընկերն է հանդիսացել, իր ընտանիքի պատիվն է պահել սրբությամբ, իր զավակների դաստիարակն է եղել՝ նոցա հայ լեզուն սովորեցրել, հայ սովորույթներն ուսուցել, ընտանեկան տնտեսության վարժեցրել, որով ցանու հայ ընտանիքը անձույլ է մնացել և որի հետեւանելով հայ ժողովրդի ազգային անկախ գյուրյունն է պահպանվել:

Եվ, վերջապես, կինը, որոնց բվում նաև հայ կինը, իր սրբակրոն կյանքով և մաքուր հավատով՝ սրբացել է. կուսանաց տոները՝ դրա լավագույն պացույցն է:

Վերոնիշյալ փաստերը ցույց են տալիս, որ հայ կինը ազգապահպանության կարևոր գործոն է հանդիսացել մեր պատմական կյանքում:

Ազգապահպանության կարևորությունը այսօր պահի է զգալի, քանի անցյալում, հայ ժողովրդի ձուլման ու անհաջման վատանգը ներկա խոշոր և քարձի կողմանական միջավայրերում՝ շատ պահի ակերախ է, քան անցյալում: Ուստի և այսօր, պահի քան անցյալում, պարտականություն ունենք՝ պահպանելով անցյալի մշակած միջոցները՝ նորերի մասին խորհենությունը:

Եթե անցյալում հայ կինը ձգել է իր արժեքավոր լուսան ազգապահպանության շափազանց կարեղոր զանձարանք՝ պահպանելով իր ընտանիքի պատիվն ու սրբությունը, լինելով իր ամուսնու հավատարիմ աշխատակից ընկերը, նենարան հանդիսանալով ընտանեկան իմաստուն տնտեսության և պատվանելով մայրենի լեզուն ու նկեղեցական-ազգային սրբությունները, այսօր անհրաժեշտություն է անցյալի միջոցների վերա հավելելու հայ մշակույթի զարգացումը լայն իմաստով ըմբռեած, և նորա լայն ծավալումը: Մշակույթի զարգացման պարտականությունը Սփյուռքում ծանրանում է որոշ մարմինների և անհատ մասնագետների վերա, իսկ Մայրենի Երկրում՝ Հայրենի Պետույան վերա:

Դպրոցակեր Տիկնանց Միության մեռում է քաժին մշակույթի ծավալման հաղցր պարտականությունը, որին նա պատվով նվիրվել է 75 տարիներ և փառք վաստակել: Հայ մատաղ սերունդին մայրենի լեզու ուսուցանել, նորա զգայուն սրտի մեջ կրոնական սուրբ զգացմունք հուզել և կրոնի վսիմ քարոյական գաղափարների հատիկներ սերմել, հայ պատմության ուսուցմանը անցյալ ու ներկա հայի հերոսական պայքարող ողի շնչել՝ նշանակում է մարզել էակ, որ ընդունակ է սիրելու իր մայրենի նկեղեցին, իր Ազգը, իր Հայրենիքն ու Հայրենի Պետությունը, ընդունակ է պայքարելու Ազգի և Հայրենիքի ազատության և անկախության համար: Միայն այսպիսի մայրեր կարող են քարոյական քաղաքարներով սեված հայ ընտանիք ստեղծել, որով և Ազգի օտարացման, ձուլման և անհաջման դեմ պայքարել՝ շինական անհանդանելի պարիսպ կանգնելով:

Խմ սիրելի հայ ժողովությունը, Հոքելյանական հանձնաժողովը որոշել է տոնել այս ազգօգուտ հաստատության 75-ամյա հոքելյանը 1952 և 1953 թվականների ընթացքում. տոնեցե՞ք ամենայն սիրով և խանդավառությամբ՝ ի գետնառություն նորա անցյալի շնորհակալ աշխատանքի և ի խրախույս՝ նորա ապագա գործունեության:

Դպրոցակեր Տիկնանց Միությունը արժանի և կարոտ է Զեր սիրույն և իրախուսանելին, որպեսզի բաշակերպի և նոր եռանդով շարունակե իր ազգությունները:

Դպրոցասեր Տիկնանց Միուրյունը արժանի և կարոտ է նաև, որ վայելի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միուրյան հովանավորությունն ու աշակեռությունը ավելի, քան ցայսօր, և արժանանա մեր բարերարեների ավելի մեծ ուշադրության, որ հնարավորություն ունենա ընդհայնելու իր այնքան կարևոր գործունեությունը նայ կյանքի համար:

Խսկ Մենք ամենայն սիրով և հանուրյամբ մաղթում ենք մեր Երկնավոր Հորը և աղերսում, որ Եր հովանի բազուկը պարզ Միուրյանդ վերա, զորացնե Զեր եռանդն ու Եվիրվածությունը, անեցն Ընկերությանդ անդամների բիվը, հերշեց մեր բարերարեներին բաղցր հայացք ունենալ հանդեպ Զեր խոշոր ազգօգուտ ձեռնարկին ու հաշողությամբ պսակե Զեր ազգօգուտ գործունեությունը:

«Արծար և ոսկի ոչ ունիմ, բայց զոր ունիմս տաց Քեզ»: Հորելյանիդ առքիվ ընդունի՛ր Մեր հայրապետական գնահատական-քաջալերական կոնդակը և Մեր բարեմաղրությունները:

Օրինում ենք նաև Հորելյանական հանձնաժողովիդ անդամներին և մաղթում Տիրողը, որ արեշատություն պարզեւ և հաշողությամբ պսակե Զեր բարի ձեռնարկը:

Աղերսանով դիմում ենք Ամենակալին, որ Սփյուռքի Մեր սիրեցյալ հոտին պարզեւ խսինմուրյուն և շրջանայեցողություն, բայց և աներկյուղ պարտանանաշություն՝ հանդեպ իր մայրենի Եկեղեցն և հարազատ Հայրենիքին:

Ողջ լեռում, զօրացեալ ի Հոգուն Մրոյ և օրինեալ ի Տեառնէ և ի Մէնջ ամէն:

Գ հ մ ր գ Զ օ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 28-է օգոստոսի 1952 ամի Տեառն
և ի տումարիս Հայոց ՌԵԲ,
յուրեղորդում ամի Հայրապետութեան Մրոյ,
ի վասն Մրոյ էշմիածնի:

